Հավելված
ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի
2016 թվականի մարտի -ի
թիվ / որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված Վերահսկիչ պալատի 2015 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի 23 ընթացիկ հաշվետվություններում: Բոլոր հաշվետվությունները, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան, Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով և դրանց մասին տեղեկացրել ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարությանը: Հաստատված 23 հաշվետվություններից մեկում առկա է պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն, հետևաբար, Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am) տեղադրված է 22 ընթացիկ հաշվետվություն:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատն ընթացիկ հաշվետվություններում վերահսկողության խնդրո առարկայի վերաբերյալ ներկայացրել է 64 առաջարկություն, որից 36-ն առնչվում է անմիջապես ակնկալվող արդյունքներին, 13-ը՝ խնդիրների կարգավորմանը, իսկ 15-ը՝ համակարգերի (ենթակառուցվածքների) բարելավմանը:

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են և շարունակում են տրամադրել տեղեկատվություն՝ հայտնաբերված և ընթացիկ հաշվետվություններում ամրագրված խախտումները վերացնելու մասին:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և *Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության* (INTOSAI) սկզբունքներով:

2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվի առնելով, որ ոլորտը ռիսկային է, հաշվետու տարում Վերահսկիչ պալատը կրկին անդրադարձել է սոցիալական ապահովության ոլորտին: Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքային գործակալությունների կողմից բնակչությանը մատուցված սոցիալական ծառայությունների նկատմամբ:

Երկու մարզերում խախտումները կրել են համընդհանուր բնույթ: Թվով 8 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններում (այսուհետ՝ ՍԾՏԳ) իրականացված ընտրանքային ստուգմամբ հայտնաբերվել է խախտման 571 դեպք՝ 105,599.5 հազ. դրամ գումարի չափով: Արձանագրվել են տարբեր բնույթի խախտումներ: Մասնավորապես.

Խախտումների տեսակը	ՀՀ Արագածոտնի մարզ		ՀՀ Կոտայքի մարզ		Ընդամենը	
	քանակ	հազ.դրամ	քանակ	հազ.դրամ	քանակ	հազ.դրամ
Տրամադրված տեղեկատվությունը ժամանակին և ամբողջությամբ համակարգ չմուտքագրելը և նպաստի վճարումը չդադարեցնելը	172	44,049.0	145	16,926.5	317	60,975.5
Նպաստառու ընտանիքների կազմի, բնակարանային պայմանների, բնակության վայրի անճշտությունների արդյունքում հայտնաբերված խախտումներ	55	13,936.0	43	6,278.0	98	20,214.0
Միայնակ, չաշխատող կենսաթոշակառուներին նպաստի գործերում հայտնաբերված խախտումներ	6	944.0	9	946.0	15	1,890.0
Նպաստառու ընտանիքների տնօրինած անասնատեսակի և դրանց քանակի մասով տվյալների ճշտության և համակարգ մուտքագրելու վերաբերյալ խախտումներ	31	4,936.0	15	1,174.0	46	6,110.0
Նպաստառու ընտանիքների անդամների՝ըստ բնակության վայրի հաշվառման և այդ տվյալների համակարգ մուտքագրման ճշտության վերաբերյալ խախտումներ	7	1,952.0	5	845.0	12	2,797.0
Նպաստառու ընտանիքների անդամների մասին տեղեկանքների հավաստիության և այդ տվյալների համակարգ մուտքագրման ճշտության վերաբերյալ խախտումներ	17	6,287.0	1	134.0	18	6,421.0

Խախտումների տեսակը	ՀՀ Արագածոտնի մարզ		ՀՀ Կոտայքի մարզ		Ընդամենը	
	քանակ	հազ.դրամ	քանակ	հազ.դրամ	քանակ	հազ.դրամ
Նպաստառու ընտանիքներին և «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց միանվագ և եռամսյակային հրատապ օգնության տրամադրման խախտումներ	47	6,129.0	9	577.0	56	6,706.0
Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման գործերում արձանագրված խախտումներ	6	216.0	3	270.0	9	486.0
ԸՆԴԱՄԵՆԸ	**341**	**78,449.0**	**230**	**27,150.5**	**571**	**105,599.5**

Ստորև ներկայացվում է արձանագրված խախտումների վիճակագրությունն ըստ առանձին մարզային ՍՕՏԳ-ների:

<u>ՀՀ Արագածոտնի մարզի ՍՕՏԳ-ներում ստուգման արդյունքների վերաբերյալ</u>

Վերահսկիչ պալատի կողմից ստուգվել է 2014 թվականից մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը: Նշված ժամանակաշրջանում վճարվել է 3.045,8 մլն. դրամի նպաստ: Մարզում հաշվառված նպաստառու ընտանիքների 7769 գործերից ստուգվել է 5492-ը, հայտնաբերվել է 341 խախտում՝ 78,5 մլն դրամի չափով:

Մարզպետարանի ենթակայությամբ գործում են Աշտարակի, Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի ՍՕՏԳ-ները:

	Մարզային ՍՕՏԳ	ՎՊ-ի կողմից ստուգված գործերի թիվը	Հայտնաբերված խախտումների դեպքերի թիվը	Հայտնաբերված խախտումների չափը /մլն դրամ/
1.	Աշտարակի ՍՕՏԳ	1790	190	46.8
2.	Թալինի ՍՕՏԳ	1925	57	13.5
3.	Ծաղկահովիտի ՍՕՏԳ	1027	51	10.5
4.	Ապարանի ՍՕՏԳ	750	43	7.7

<u>ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում ստուգման արդյունքների վերաբերյալ</u>

Վերահսկիչ պալատի կողմից ստուգվել է 2014 թվականից մինչև 2015 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակաշրջանը: Նշված ժամանակաշրջանում վճարվել է 4,221.0 մլն. դրամի նպաստ: Մարզում հաշվառված նպաստառու ընտանիքների 9912 գործերից ստուգվել է 6753-ը, հայտնաբերվել է 230 խախտում՝ 27.2 մլն դրամի չափով:

Մարզում գործում են սոցիալական ծառայության 4 տարածքային գործակալություն /ՍԾՏԳ/՝ Աբովյանի, Հրազդանի, Չարենցավանի և Եղվարդի, բոլորն էլ՝ մարզպետարանի ենթակայությամբ:

	Մարզային ՍԾՏԳ	ՎՊ-ի կողմից ստուգված գործերի թիվը	Հայտնաբերված խախտումների դեպքերի թիվը	Հայտնաբերված խախտումների չափը /մլն դրամ/
1.	Աբովյանի ՍԾՏԳ	2021	44	4.2
2.	Հրազդանի ՍԾՏԳ	1665	44	5.8
3.	Եղվարդի ՍԾՏԳ	1526	76	9.9
4.	Չարենցավանի ՍԾՏԳ	1541	66	7.3

Արձանագրված խախտումների պատճառահետևանքային կապերի վերլուծության արդյունքում՝ հետագա հնարավոր խախտումները բացառելու նպատակով, Վերահսկիչ պալատը ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնք, ըստ էության ամբողջությամբ, ընդունվել են:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աջակցություն կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին» և «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում» դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ:

«Աջակցություն կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին» դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն իրականացրել է ՀՀ կառավարության կողմից հիմնադրված «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամը:

Ծրագրի նպատակներն են.

- Իրականացնել կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման, հանրային կրթության արշավներ և ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (հատուկ առանձնացված թիրախային խմբերի հետ տարվող աշխատանքներ):
- Իրականացնել նոր համակարգի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ակտիվ իրազեկում (դասընթացներ, համաժողովներ, տեղեկատվական նյութերի և ուսումնական ծրագրերի մշակում, կայքի և թեժ գծի, մամուլի միջոցով հրապարակումներ):
- Թեժ գծի և միասնական պորտալի միջոցով ազգաբնակչության շրջանում իրականացնել նոր կենսաթոշակային համակարգի ակտիվ իրազեկում:

Ծրագրի իրագործման նպատակով «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից ստացել է 145,112.1 հազ. դրամ:

Արձանագրվել են մի շարք խախտումներ և թերություններ, մասնավորապես.

- Ծրագրի համար գնված ապրանքները չեն մուտքագրվել հիմնադրամի պահեստ, չեն ձևակերպվել որպես ապրանքանյութական արժեքներ և չեն ելքագրվել, այսինքն, չի եղել դրանց բաշխումը կամ օգտագործումը հիմնավորող որևէ փաստաթուղթ: Որոշ դեպքերում բացակայում էր մատուցված ծառայությունների կատարողականի, հանձնման-ընդունման ակտերը: Որոշ աշխատակիցներ մեկնել են գործուղման առանց համապատասխան հրամանների և հիմքերի:
- Գնումներ իրականացնելիս չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները: Նույնիսկ շատ դեպքերում չեն կնքվել պայմանագրեր, չեն կազմվել աշխատանքների հանձնման-ընդունման ակտեր:
- Քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքի ընդունված անձանց համար պահանջվող նվազագույն կրթական մակարդակը, նվազագույն փորձը, հմտությունը հավաստող փաստաթղթերն առկա չէին (13 դեպք):
- Ֆինանսական բնույթի այլ թերացումներ և բացթողումներ, որոնց վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի պաշտոնական էլեկտրոնային էջում:

«Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն իրականացրել է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ը: Այդ նպատակով վերջինս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից ստացել է 24,311.0 հազ. դրամ:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- ՀՀ տարածքում ընտանեկան բռնության ենթարկված կանանց տրամադրվող գույքագրված ծառայություններ:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության ու տրամադրվող ծառայությունների բարելավման և հզորացման նպատակով մշակված առաջարկությունների փաթեթ:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար մշակված իրավական նորմեր և ուղղորդման կարգ:

Արձանագրվել են մի շարք խախտումներ և թերություններ, մասնավորապես.

- Ծրագրի շրջանակներում գնումներն իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:
- Ծրագրի շրջանակներում հարցազրուցավարների, փորձագետների կողմից մատուցված ծառայությունների կատարման փաստը հիմնավորող փաստաթղթերը թերի են և մասնակի (պարզ չէ, թե յուրաքանչյուր անձ տվյալ ամսում քանի խորացված, փորձագիտական հարցազրույցներ է անցկացրել և քանի ֆոկուս խմբի է մասնակցել):
- Ֆինանսական բնույթի այլ թերացումներ և բացթողումներ, որոնց վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում:

Վերահսկողության արդյունքների կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզպետարանները

Վերահսկիչ պալատին ներկայացրել են պաշտոնական գրություններ արձանագրված խախտումների վերացման, շտկման և վերադարձման ենթակա գումարների, ինչպես նաև հետագայում հնարավոր խախտումները բացառելուն ուղղված առաջարկությունների մասով տարվող աշխատանքների մասին:

ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերում գործող ՍՕՏԳ-ների կողմից թույլ տրված խախտումների բնույթն ու ծավալները նկատի ունենալով, ինչպես նաև, հետագայում ոլորտում նմանատիպ խախտումները կանխարգելելու նպատակով, Վերահսկիչ պալատը 2016 թվականին նախատեսել է ստուգումներ անցկացնել նաև ՀՀ մյուս մարզերում:

Սոցիալական ոլորտում հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը» բաղադրիչ

Բաղադրիչի ընդհանուր արժեքը 13.5 մլն ԱՄՆ դոլար է, որից՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի վարկային միջոցներ՝ 10.8 մլն ԱՄՆ դոլար, դրամաշնորհային միջոցներ՝ 0.5 մլն ԱՄՆ դոլար, ՀՀ բյուջեից համաֆինանսավորման միջոցներ՝ 2.2 մլն ԱՄՆ դոլար:

Բաղադրիչի նպատակն է՝ ավելացնել Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում աղքատ մանրածավալ արտադրողների կարողությունները և եկամուտը՝ կապելով նրանց հայկական պտղի և ընկուզեղենի արտադրությանը:

Բաղադրիչի իրականացնողը «Հայկական միրգ» ԲԲԸ-ն է:

Ծրագիրը Վերահսկիչ պալատի կողմից վերահսկվել է նաև 2013 և 2014 թվականներին: Վերահսկողության արդյունքներն ամփոփվել և հրապարակվել են:

Այնուհետև, 2014 թվականի ավարտին Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից իրականացվում է ծրագրի իրագործման միջնաժամկետ առաքելություն, որի արդյունքում կազմվում է հուշագիր, որտեղ «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը» բաղադրիչի զարգացման մակարդակը գնահատվում է անբավարար:

«Հայկական միրգ» ԲԲԸ-ի գործունեությունը նույնպես գնահատվել է անբավարար: Նշվել է, որ ծրագրի առաջընթացի հիմնական խոչընդոտը «Հայկական միրգ» ԲԲԸ-ն է: Թերացումների արդյունքում ընկերությունը չի կատարել իր դերը որպես այգեգործական ենթաոլորտի զարգացման խթան:

Հուշագրով առաջարկվել է կոնսոլիդացնել «Հայկական միրգ» ԲԲԸ-ի գործառնություն-ներն ու ֆինանսավորումը: Առաջարկվել է այգիների հետագա ընդլայնումը դադարեցնել և բարձրացնել արդեն հիմնած շուրջ 80 հա այգիների շահութաբերությունը: Այդ նպատակով, Հիմնադրամի ֆինանսավորման շրջանակներում նախատեսվել է

հատկացնել 1.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ մնացած՝ 7.8 մլն ԱՄՆ դոլար մնացորդը՝ վերաբաշխել «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ուղղությամբ:

Հուշագրի վերոհիշյալ առաջարկություններն ընդունվել են և 2015 թվականի օգոստոսի 15-ին Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի միջև կնքված «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի վարկային համաձայնագրում կատարվել է փոփոխություն:

Բաղադրիչի ֆինանսավորումը ծրագրի սկզբից մինչև 2015 թվականի նոյեմբեր ամիսը կազմել է 2,538.2 հազ. ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը կրկին անդրադարձել է «Հայկական միրգ» ԲԲԸ-ի գործունեությանը և արձանագրել.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածում կատարողականը կազմել է 330.6 հազ. ԱՄՆ դոլար, ինչը կազմում է այդ ժամանակահատվածի համար պլանավորված ծախսերի ընդամենը 30%-ը:

Պլանավորված գործողություններն, այդ թվում նաև գնումները, կատարվել են հաստատված ծավալներից և ժամկետներից շեղումներով:

Չեն կատարվել 50 հա այգիների համար կաթիլային ոռոգման համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքները:

Ոռոգման ջրի առկայության պայմաններում արձանագրվել են կեռասենիների և սալորենիների չորացման դեպքեր:

2. «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի «Ներդրումներ» ենթաբաղադրիչ

Ենթաբաղադրիչի նպատակն է՝ խթանել գյուղական մանրածավալ և միջին վերամշակող կազմակերպությունների տնտեսական ակտիվությունը՝ բաժնետիրական ներդրումների և փոխառությունների տրամադրման միջոցով:

Աշխատանքներն իրականացվել են «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ»-ի կողմից՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) ֆինանսավորմամբ:

Վերահսկվող ժամանակահատվածում հատկացված միջոցներից երկու ընկերությունում կատարվել է 61.0 մլն դրամի ներդրում և 4 ընկերության տրամադրվել է 175.0 մլն դրամի փոխառություն:

Ընդհանուր առմամբ, ծրագրի սկզբից մինչև վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը, կատարվել է 1,436.0 մլն դրամի ներդրում 10 ընկերությունում, որից 6-ին տրամադրվել է նաև 671.0 մլն դրամի փոխառություն: Ընդ որում, մեկ ընկերության բաժնետոմսերը դեռևս 2014 թվականին վաճառվել է, իսկ ներդրված 200.0 մլն դրամ գումարը հետ է վերադարձվել:

Բաժնետոմսերի բաժանորդագրման և փոխառությունների տրամադրման պայմանագրերով սահմանված՝ Հիմնադրամի և ընկերությունների կողմից

երաշխավորված նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշները չեն ապահովվել:

Ծրագրի սկզբից մինչև վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը ընկերությունների կողմից պետք է կատարվեր 1.0 մլրդ դրամ շահութաբաժնի և փոխառության գումարի վճարում, սակայն վճարման ժամանակացույցերի փոփոխման արդյունքում 252.0 մլն դրամի վճարումը հետաձգվել է և վճարվելիք գումարի չափը սահմանվել է 748.0 մլն դրամ, որից վճարվել է ընդամենը 409.0 մլն դրամ: Պարտքը կազմել է 339.0 մլն դրամ, իսկ ժամկետանց օրերի տույժը՝ 53.0 մլն դրամ:

Հիմք ընդունելով ՀՀ վերահսկիչ պալատի նախորդ տարիների վերահսկողության, ինչպես նաև աուդիտի և հիմնադրամի աշխատակազմի իրականացրած մոնիտորինգի արդյունքները, Հիմնադրամը մշակել է «Հիմնադրամի ներդրումների իրականացման և վերակառուցման գծով իրականացվելիք քայլերի, ինչպես նաև ներքին կանոնակարգային փոփոխությունների Գործողությունների ծրագիր»: Արդյունքում, որոշվել է 2015 թվականի համար չսահմանել նվազագույն եկամտաբերության շեմ և դադարեցնել ընկերությունների նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկը: Համաձայն գործողությունների ծրագրի՝ ընկերությունները բաժանվել են երեք խմբի.

I. Անհույս ընկերություններ

Պարտավորությունները Հիմնադրամի և այլ ֆինանսական կառույցների հանդեպ գերազանցել են առկա ակտիվները:

Այս խմբում ներառվել են չորս ընկերություն, որից երկուսը պաշտոնապես սնանկ են ճանաչված, իսկ մյուս երկուսը մի քանի տարի է, ինչ չեն գործում և փաստացի սնանկ են: Այդ ընկերություններում 585.0 մլն դրամի չափով կատարվել է ներդրում և տրամադրվել է փոխառություն: Պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ կազմում է 810.6 մլն դրամ:

Ներկայումս բանակցությունների, վաճառքի, դատական մարմիններին դիմելու ճանապարհով ձեռնարկվում են միջոցներ՝ վերը նշված վնասը մասնակի վերականգնելու ուղղությամբ:

II. Ռիսկային ընկերություններ

Այս խմբում ներառվել են երկու ընկերություն: Ներդրված և տրամադրված փոխառության գումարը կազմում է 420.0 մլն դրամ: Այդ երկու ընկերությունների գծով հիմնադրամի նկատմամբ պարտավորությունները վերահսկողության ժամանակահատվածում կազմել է 538.2 մլն դրամ:

Ծրագրով նախատեսվել է «դուրս գալ» այդ ընկերություններից, անկախ այն փաստից, դրանք ժամանակին են կատարում վճարումները թե ոչ, քանի որ այդ ընկերությունները պատրաստ չեն և չեն ցանկանում Հիմնադրամն ընդունել որպես գործընկեր, չունեն հաշվապահական ընդունելի համակարգ, չեն անցնում աուդիտ և չեն ապահովում հաշվետվողականություն:

III. Պոտենցիալ համագործակցող ընկերություններ

Այս խմբում ներառվել են երեք ընկերություն: Ծրագրի շրջանակներում ընկերություններին տրամադրվել է 105.0 մլն դրամի անտոկոս փոխառություն: Երեք ընկերություններից մեկում կատարվել է ևս 46.8 մլն դրամի ներդրում՝ չսահմանելով

նվազագույն եկամտաբերություն և նվազագույն շահութաբաժին: Մեկ այլ ընկերությունում փոխառությունների մարման համար սահմանվել է 3 տարի արտոնյալ ժամկետ և հետաձգվել է լրիվ մարման ժամկետը, իսկ մյուս ընկերությունում ընթանում էր 50.0 մլն դրամ փոխառությունը բաժնեմասնակցության վերածնակերպելու գործընթաց.

Այսպիսով, «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրության»-ը բաղադրիչը դադարեցվել է, կատարված ծախսերի արդյունավետությունը հարցականի տակ է. Մնացած բաղադրիչներով աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ «ներդրումներ» բաղադրիչով իրավիճակը կարգավորելու համար ընդունվել և իրականացվում է «գործողությունների ծրագիր». Ուստի, ընդհանուր ծրագրի կատարման արդյունավետության վերաբերյալ եզրակացություն տալ հնարավոր կլինի բաղադրիչներով և «գործողությունների ծրագրով» նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո.

3. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոն ՓԲԸ-ներ</u>

ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանով 1999թ.-ից ՀՀ բոլոր մարզերում ստեղծվել են գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ, իսկ Երևանում՝ մեկ հանրապետական կենտրոն:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանում ֆինանսավորումը կազմել է 500,143.8 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 415,036.3 հազ. դրամ, սեփական գործունեության եկամուտներից՝ 85,107.5 հազ. դրամ:

Նպատակը մարզերի ագրոպարենային համալիրի ձեռնարկություններին, գյուղացիա-կան, գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական, տեղեկատվական, մարքեթինգային ծառայությունների մատուցումն է և արտադրության արդյունավետ կազմակերպման գիտական նորույթների, նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ գործնական աջակցության ցուցաբերումը:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

<u>Խորհրդատուների հաշվետվությունների վերաբերյալ</u>

Գյուղատնտեսության աջակցության 10 մարզային կենտրոններում 2014 թվականի և 2015 թվականի առաջին եռամսյակում կազմակերպվել է 1356 սեմինար, որից Վերահսկիչ պալատն ընտրանքային կարգով ստուգել է 383-ը կամ 28,2%-ը: Հաշվետվությունները հիմնականում կրում են ձևական բնույթ և ռիսկային են:

Խորհրդատուի կողմից կազմակերպված սեմինարներին միևնույն մասնակցի ստորագրությունները տարբեր ամիսների հաշվետվություններում էականորեն տարբերվում են: Հաճախ գյուղացին տեղյակ չէ և չի մասնակցել սեմինարին, բայց նրա անունը լրացված և ստորագրված է:

Մեկ դեպքով արձանագրվել է, որ մարդը մահացել է դեռևս 2013 թվականի դեկտեմբերին, սակայն խորհրդատուի կողմից համայնքում 2015 թվականի մարտին կազմակերպված սեմինարին հաշվետվությանը կից ցուցակով ներկայացվել է որպես մասնակից, նույնիսկ առկա է եղել ստորագրություն:

Տնօրենների հրամանով 15 խորհրդատու (Արմավիրում՝ 6, Գեղարքունիքում՝ 2, Շիրակում՝ 2, Արագածոտնում՝ 5) գտնվել է արձակուրդում, սակայն այդ ընթացքում, ըստ իրենց կողմից ներկայացված հաշվետվությունների, անցկացրել են սեմինարներ:

Հաստատված թեմաների վերաբերյալ

2014-2015 թվականների աշխատանքային ծրագրերում ընտրված էին անհասկանալի, հաճախ ոչ տրամաբանական, կրկնվող թեմաներ: Համայնքներում ամեն տարի նույն թեմայով, գրեթե նույն մասնակիցներով անցկացվել էին սեմինարներ:

Հաստիքների վերաբերյալ

Որոշ խորհրդատուների մասնագիտական որակավորումը չի համապատասխանում գյուղական խորհրդատվական ծառայությունների ծրագրով նախատեսված պահանջներին:

Խորհրդատուներն, ունենալով մանկավարժի, ինժեների, դեղագործի, տնտեսագետի երկրաբանի, որակավորում կամ, ընդհանրապես չունենալով որակավորում, (օրինակ՝ 5-րդ կուրսից հեռացված ուսանող) խորհրդատվական ծառայություններ են մատուցել ագրոնոմիական, անասնաբուծության կամ անասնաբուժության թեմաներով:

Շիրակի մարզը սպասարկող թվով 10 խորհրդատուից 6-ի տարիքն անցնում է 65-ը, դեռ ավելին, նրանցից մեկը 78 տարեկան է, իսկ մյուսը՝ 79, Լոռու մարզում երեք խորհրդատուի տարիքն անցնում է 65-ը, նրանցից մեկը 71 տարեկան է: Նրանք սպասարկում են յուրաքանչյուրը 7-10 համայնք:

Սեփական եկամուտների վերաբերյալ

Սեփական եկամուտների մոտ 15 %-ը ձևավորվում է թերթերի իրացումից, 20 %-ը՝ գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումից, իսկ մնացած գերակշիռ մասը ձևավորվել է տարբեր կազմակերպությունների պատվերով տրված խորհրդատվական ծառայություններից:

Առավել ռիսկային է համարվել գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կողմից որոշ ընկերություններին հանձնված մեկական «Բելառուս» մակնիշի տրակտորներով և կցված գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով մատուցվող ծառայությունները (հունձ, վար, ցանք, սրսկում, հակավորում):
Մարզերից 4-ում (Արագածոտն, Արմավիր, Կոտայք, Գեղարքունիք) տրակտորների վրա առկա աշխատանքային ժամերն արձանագրող էլեկտրոնային ցուցիչը փաստում է, որ ընկերությունների բյուջե կարող էր մուտքագրվել ավելի շատ եկամուտ, քան փաստացի ապահովվել է:

Ըստ գյուղացիներից ստացված տեղեկությունների և ուսումնասիրությունների ծառայությունների մատուցման պայմանագրերը հիմնականում կրում են ձևական բնույթ և չեն համապատասխանում իրականությանը: Գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայությունների մատուցման որոշ վճարներ չեն հաշվառվել:

4. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիր

Ծրագիրն իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից: Այն ունի երկու բաղադրիչ.

- **«Կենսապատվաստուկների ձեռքբերում»**

Պետական բյուջեից այդ նպատակով 2014 թվականին հատկացվել է 578,223.3 հազ. դրամ, իսկ 2015 թվականին՝ 567,611.4 հազ. դրամ:

- **«Հակաանասնահամաճարակային միջոցառումների կազմակերպում»**

Պետական բյուջեից այդ նպատակով 2014 թվականին հատկացվել է 542,519.0 հազ. դրամ, իսկ 2015 թվականին՝ 594,603.4 հազ. դրամ: Հիմնականում վճարվել է անասնաբույժների և համաճարակաբանների աշխատավարձը:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

Հայաստանի Հանրապետությունում չկա անասնագլխաքանակի հաշվառման, համարակալման, գրանցման ու անձնագրավորման համակարգ: Նման իրավիճակը բացասաբար է ազդում ծրագրի արդյունավետության վրա:

Հակահամաճարակային միջոցառումների իրականացման և անհրաժեշտ պատվաստանյութերի ձեռքբերման հաշվարկների վերաբերյալ կարգ նույնպես գոյություն չունի (պլանավորման մասով դաշտը կարգավորված չէ): Արդյունքում, հաջորդ տարվա ծրագրի բյուջեն կազմելու ընթացքում՝ հաշվետու տարվա ավարտին, համապատասխան պահեստներում առկա պատվաստանյութերի, ախտորոշիչ և լաբորատոր նյութերի մնացորդները հաշվի չեն առնվել:

2014-2015 թվականների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռքբերված պատվաստանյութերի որակի ստուգում չի կատարվել (ՀՀ-ում չկա որակի ստուգման համապատասխան լաբորատորիա): Նշված փաստը մտահոգիչ է և իր մեջ պարունակում է ռիսկեր:

Պատվաստանյութերի տեղափոխման և պահպանման համար անհրաժեշտ ջերմաստիճանային պայմանները տարբեր են, հետևաբար, դրանց երկարաժամկետ պահպանության համար անհրաժեշտ են առանձնահատուկ սառնարանային պայմաններ: ՀՀ բոլոր մարզերի համայնքներին տրամադրված սառնարաններից միայն 560 սառնարանն ու 59 թերմոճամպրուկն է պիտանի շահագործման, այն դեպքում, երբ ՀՀ-ում առկա է 1022 անասնաբուժական տեղամաս, որոնք սպասարկվում են միջինը 603 անասնաբույժի կողմից: Միջին հաշվով, 462 անասնաբուժական տեղամաս ապահովված չէ աշխատող սառնարանով, իսկ 43 անասնաբույժ, ընդհանրապես, չունի սառնարան: Որոշ համայնքներում պատվաստանյութերն անասնաբույժների կողմից պահպանվում են նկուղներում կամ անձնական օգտագործման՝ սննդամթերքների պահպանության համար նախատեսված սառնարաններում: Հետևաբար, համայնքներում պատվաստանյութերի պահպանման պայմանների ոչ լիարժեք ապահովման պատճառով վտանգվում են պատվաստանյութերի որակական հատկանիշները:

Պատվաստանյութերի ձեռքբերման մասով. Յուրաքանչյուր ծրագրի նկատմամբ հետևողական վերահսկողական աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը, օրինակ՝ գյուղատնտեսական կենդանիների համար նախատեսվող պատվաստանյութերի գնման գործարքների նկատմամբ Վերահսկիչ պալատի տևական վերահսկողության արդյունքում ներկայումս ՀՀ կառավարությունը դրանք ձեռք է բերում անհամեմատ ողջամիտ գներով:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս պատվաստանյութի ձեռքբերման գների դինամիկան ըստ տարիների:

Տարեթիվը	Մեկ չափաբաժնի գինը /դրամ/	Մատակարար կազմակերպություն	Արտադրող
2008թ	290	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
2009թ	290	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
2010թ	234	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
2011թ	212.5	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
	221		
2012թ	208	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
2013թ	198	«Ամասիա» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ
2014	216.5	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	Պակրովի կենսապատվաստուկների գործարան, ՌԴ
2015	214.4	«Ամասիա» ՍՊԸ	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ (ք.Վլադիմիր)
2016	154.3	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ (ք.Վլադիմիր)	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» /ՖԳԲՍ «ВНИИЗЖ» ՌԴ (ք.Վլադիմիր)

Վերահսկիչ պալատի ընթացիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս հնարավոր է գնման արդյունավետությունը բարելավել՝ խնայելով պետական բյուջետային միջոցները: Այդ նպատակով, Վերահսկիչ պալատը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն առաջարկել է այսուհետ պատվաստանյութերի և լաբորատոր նյութերի գնումների գործընթացը կազմակերպել ավելի արդյունավետ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան կատարելով գնումներ անմիջապես արտադրողից, հատկապես, նկատի ունենալով նաև «ինսուլինի» և այլ դեղատեսակների գնման գործընթացում Վերահսկիչ պալատի և ՀՀ առողջապահության նախարարության կառուցողական համագործակցության փորձը:

5. ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ

2014-2015 թվականներին գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի և աշնանացան ցորենի արտադրության զարգացման ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի և ՀՀ մարզպետարանների միջև կնքվել են սերմացուների տրամադրման և դրանց դիմաց վճարման փոխառության պայմանագրեր:

Ծրագրերի վրա ընդհանուր առմամբ ծախսվել է 3,293,899.7 հազ. դրամ, որից՝ 1,715,824.2 հազ. դրամը ՀՀ պետական բյուջեից է, իսկ 1,578,075.5 հազ. դրամը՝ ՊՈԱԿ-ի նպատակային հաշիվների գումարներից:

Հայաստանի Հանրապետության մարզպետարաններն ըստ համայնքների պետք է ամփոփեն 2014 թվականին գարնանացանի համար հողօգտագործողների կողմից նախապես վճարում կատարելու պայմանով ներկայացված պահանջների հիման վրա համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան ներկայացված անհրաժեշտ սերմացուի վճարունակ պահանջարկները, հաստատեն և ներկայացնեն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

2014 թվականին ներկրված սերմացուների մի մասը չի իրացվել, ինչի արդյունքում ՀՀ կառավարության 14.08.2014թ. թիվ 941-Ն որոշմամբ, վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով, չիրացված գարնանացան գարու՝ 1239.2 տ, եգիպտացորենի՝ 18.8 տ, առվույտի՝ 126.9 տ և կորնգանի՝ 44.5 տ սերմացուները անվճար հատկացվել են ՀՀ մարզերին՝ իրենց կողմից ներկայացված պահանջարկ-հայտերի քանակներին համապատասխան:

Անվճար տրամադրվել է՝ 1429.3տ սերմացու, որի արժեքը կազմել է 704,344.0 հազ. դրամ: Արդյունքում, պետության սուբսիդավորման չափն անվճար հատկացվածի հետ միասին կազմել է՝ 916,440.4 հազ. դրամ, որը հետևանք է մարզպետարանների կողմից անհրաժեշտ քանակի ոչ ճիշտ պլանավորման: Այսինքն ծրագրի գրեթե ամբողջ բեռը՝ շուրջ 80.9%-ն ընկել է պետության վրա, իսկ 2015թ. գարնանացանի համար մարզերից առվույտի քանակի ոչ ճիշտ պահանջարկի ներկայացման հետևանքով 27.10.2015թ. դրությամբ 32.3տ առվույտի չիրացված սերմացու մնացել է ՊՈԱԿ-ում՝ պահեստավորված վիճակում:

Վերահսկիչ պալատի կողմից առավել ռիսկային է համարվել 2014թ.-ի անվճար հատկացված սերմացուների բաշխումը շահառուներին, որի գծով ընտրանքային կարգով կատարվել են ուսումնասիրություններ ՀՀ Շիրակի և Արագածոտնի մարզերում:

Քանի որ ՀՀ կառավարության 06.02.2014թ. N 149-Ն որոշման մեջ բացակայում են հողօգտագործողներին սերմացուի բաշխման սկզբունքները, ուստի, համայնքների որոշ ղեկավարների կողմից այն հատկացվել է կամայականորեն, հիմնականում համայնքի ղեկավարի միանձնյա որոշման հիման վրա:

Հատկացված սերմացուի որոշ մասը չի ցանվել, որոշ դեպքերում սերմացուն շահառուներին տրամադրվել է քիչ չափաքանակներով, որի պատճառով ծրագրով ակնկալվող արդյունքը արդյունավետ չի ստացվել:

Գյուղատնտեսության ոլորտում Վերահսկիչ պալատի կողմից հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատն ընտրանքային կարգով ստուգել է ՀՀ ներմուծվող դեղերի գների և ներմուծման օրինականությանն ու արդյունավետությանը վերաբերվող հարցեր:

Նախորդ տարիներին ՀՀ-ում դեղերի շրջանառության ոլորտում Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում ներկայացվել էին մի շարք առաջարկություններ, որոնց մեծ մասն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից:

Արդյունքում, որակյալ «Ինսուլին» և «Գլիկլազիդ» դեղերով բնակչության կարիքների բավարարման նպատակով հատկացվող բյուջետային ծախսերն էապես նվազեցվել են, քանի որ նշված դեղերը գնվում են անմիջապես արտադրողից՝ ավելի էժան գնով:

Այնուամենայնիվ, դեռևս լուծված չէ «Գլիմեպիրիդ» և «Մեթֆորմին» շաքարային դիաբետի դեղերի անմիջապես արտադրողից ուղղակի եղանակով գնման հարցը:

Այդ կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը պարզաբանել է, որ ներկա պահին բանակցություններ են ընթանում «Գլիմեպիրիդ/մետֆորմին» և «Մետֆորմին հիդրոքլորիդ» դեղերը եվրոպական արտադրողից ուղղակի եղանակով ձեռք բերելու նպատակով:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

Թեև 2013 թվականին Վերահսկիչ պալատն արձանագրել էր, որ դեղերի ձեռքբերման գները 2014-2015 թվականների կտրվածքով էականորեն նվազել են, այդուհանդերձ, դեղերի գնումներում դեռևս առկա են դեպքեր, երբ դրանք ձեռք են բերվում ներմուծման արժեքից էականորեն բարձր գնով : Օրինակ՝

- 2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռք է բերվել 4677 դեղահատ «Դեսմոպրեսին ացետատ» 0.1մգ/5մլ դեղը՝ մեկ դեղահատը՝ 5789 դրամով, 27,075.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով, այն դեպքում, երբ նշված դեղը ՀՀ է ներմուծվել 2720 դրամով (ներառյալ ԱԱՀ-ն) կամ նախարարության գնման գնից ավելի քան կրկնակի անգամ ցածր գնով:
- Նույն դեղը 2015 թվականին 5000 դեղահատ ձեռք է բերվել 5267 դրամով, որը ՀՀ է ներմուծվել 3000 (ներառյալ ԱԱՀ-ն) դրամով կամ նախարարության գնման գնից 75 տոկոս ցածր գնով:
- 2015 թ. ներմուծման գնից 64% բարձր գնով (44.7 դրամով) ձեռք է բերվել 358500 հատ «Գլիկլազիդ» 60 մգ (Diazon-MR) դեղը, որը ՀՀ է ներմուծվել 27.2 դրամով:

Վերոնշյալ օրինակները վկայում են, որ կենտրոնացված կարգով իրականացվող դեղերի գնման գործընթացում դեռևս առկա են գնագոյացմանն առնչվող խնդիրներ, որոնք ենթակա են հետագա համալիր և համապարփակ ուսումնասիրության:

Այդ կապակցությամբ, Վերահսկիչ պալատն առաջարկել է «Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում ներդնել դեղերի գների կարգավորման սպառիչ մեխանիզմներ:

Բացի այդ, հաշվետու տարում Վերահսկիչ պալատն ընտրանքային կարգով ստուգել է նաև «Բնակչության առողջության առաջնային պահպանում» ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության և բժշկական հաստատությունների միջև կնքված պայմանագրերով հատկացված միջոցների հաշվին դեղերի գնման հետ կապված ծախսերը:

Ընտրանքային կարգով ստուգումներ են իրականացվել «Երևանի քաղաքապետարանի թիվ 20 պոլիկլինիկա», «Երևանի քաղաքապետարանի թիվ 22 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» (այսուհետ՝ պոլիկլինիկա) և ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» (այսուհետ՝ Ուռուցքաբանության կենտրոն) ՓԲԸ-ներում:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

Ստուգմամբ պարզվել է, որ պոլիկլինիկաներում մի շարք դեպքերում դեղերը գնվում են ներմուծման արժեքից էականորեն բարձր գնով:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանում որոշ պոլիկլինիկաներ իրենց գնումների պլանում նշել են գնման ենթակա դեղի առևտրային անվանումը: Մինչդեռ, ըստ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման պահանջի, դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները:

Բժշկական հաստատությունների կողմից գնումների պլանները կազմվել են ՀՀ կառավարության որոշման պահանջների խախտումներով: Մատակարարից դեղը ստանալիս կամ ընդունելիս դեղի մնացորդային պիտանիության ժամկետների պահանջները խախտվել են:

Որոշ պոլիկլինիկաներ օրենսդրության խախտմամբ իրենց գնումների պլանում ներառել և հետագայում ձեռք են բերել կենսակտիվ հավելումներ, որոնց շրջանառությունը կանոնակարգված չէ: Դեղատնային ցանցում և բժշկական հաստատությունների կողմից դրանք գնվում և օգտագործվում են որպես բուժամիջոց՝ առանց փորձագիտություն անցնելու և դեղերի ռեեստրում գրանցվելու:

Ստուգված բոլոր հաստատություններում դեղերի հաշիվ-ապրանքագրերում չեն նշվել դրանց խմբաքանակի (սերիայի) համարը: Մատակարարի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերում չի նշվել մատակարարված դեղի սերիան (բացառությամբ՝«Ռիխտեր Լամբրոն» ՍՊԸ-ի): Նման իրավիճակը նվազեցնում է դեղերի շրջանառության նկատմամբ իրականացվող հսկողության արդյունավետությունը:

Բացի այդ, պետք է նշել, որ Ուռուցքաբանության կենտրոնում իրականացված ստուգման ընթացքում քիմիաթերապիայի բաժանմունքի կողմից տրամադրվել են բուժման նպատակով հիվանդների կողմից ձեռք բերված և 14 օրվա ընթացքում օգտագործված քիմիաթերապևտիկ դեղամիջոցների դատարկ սրվակներ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդ ժամանակահատվածում օգտագործված 691 սրվակ դեղամիջոցներից 293-ը Նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից փորձաքննություն չեն անցել, ընդ որում, դրանցից 199-ը՝ ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում ընդհանրապես գրանցված չեն եղել: Փաստորեն՝ ստուգման ընթացքում երկշաբաթյա ժամկետի կտրվածքով ստացված արդյունքները վկայում են, որ Ուռուցքաբանության կենտրոնում քիմիաթերապևտիկ բուժման նպատակով հիվանդների կողմից բերված դեղերի շուրջ 42%-ի շրջանառությունը գտնվում է պետական վերահսկողությունից դուրս:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ թիվ 22 և Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկաներում և Ուռուցքաբանության կենտրոնում որոշ դեղերի պահեստավորումն ու պահպանումը կատարվել է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտմամբ, մասնավորապես

լույսի և խոնավության ազդեցությունից պաշտպանում պահանջող մի շարք դեղեր պահպանվել են լուսաթափանց և խոնավ սենյակներում:

Հաշվետու տարում, դեղերի շրջանառության հարցերից բացի, Վերահսկիչ պալատն անդրադարձել է նաև «Առողջապահական համակարգի հզորացում» ծրագրին: Վերահսկողության արդյունքները վկայում են, որ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորմամբ կատարվող ծրագրի շրջանակներում քիմիական նյութերը գնվել են բավականին թանկ գներով: Այսինքն՝ մատակարարի կողմից նյութի ձեռքբերման գնի և դրա հետագա վաճառքի գնի միջև տարբերությունը մի շարք դեպքերում եղել է մեծ:

Առողջապահության ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրվել են այլ խախտումներ, թերություններ և բացթողումներ: Ներկայացվել են նաև այլ առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ոլորտի արդյունավետության բարձրացմանը: Վերահսկողության ամբողջական արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունն ամփոփված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏ

Էներգետիկ ոլորտում հաշվետու տարում Վերահսկիչ պալատն անդրադարձել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրագործվող մի շարք ծրագրերին: Մասնավորապես.

«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր»

Ծրագիրը պայմանավորված է Հայաստանի էլեկտրահաղորդման համակարգի հին և ոչ բարվոք ենթակառուցվածքների վերակառուցման անհրաժեշտությամբ:

Նախատեսվել է 220կվ հզորության 228 կմ էլեկտրահաղորդման նոր գծերի (հաղորդալար, հենասյուն, բետոնյա հիմք, մեկուսիչ և այլ բաղադրիչ) կառուցում: Նոր գծերը պետք է կառուցվեն հնին զուգահեռ, ընդ որում, հինը կապամոնտաժվի, երբ նոր գծերը ենթարկվեն շահագործման:

Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականի հունիսից: Այն նախատեսվում է ավարտել 2016 թվականի հուլիսին:

Ծրագրի արժեքը 52.0 մլն ԱՄՆ դոլար է, այդ թվում՝ 39.0 մլն ԱՄՆ դոլարը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկային միջոցներն են, իսկ 13.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման:

Ծրագրի կատարման պատասխանատուն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն է:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

- Խորհրդատուի (ՄՎՎ Դեքոն – Քոնսուլեքտրա Ունտերնեհմենսբերատունգ ԳՄԲՀ համատեղ ձեռնարկություն) կողմից պայմանագրային պարտավորությունների թերի կատարման, ինչպես նաև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից համայնքային և սեփականության իրավունքով պատկանող հողերի ձեռք բերման գործընթացի ձգձգման արդյունքում ստուգման պահի դրությամբ նախատեսված 719 անկյունային և խարսխային հենարանի 19%-ն արդեն ենթարկվել էր փոփոխության:

- Երկաթբետոնե հիմքերի մոնտաժման աշխատանքը թերի է կատարվել: Նախատեսված 88% -ի փոխարեն փաստացի կատարվել է 63.4%-ը:

- Մետաղական հենարանների տեղադրման աշխատանքը թերի է կատարվել: Նախատեսված 75% -ի փոխարեն փաստացի կատարվել է 33.8%-ը:

- Հաղորդալարերի ձգման աշխատանքը թերի է կատարվել: Նախատեսված 75% -ի փոխարեն փաստացի կատարվել է 15.6%-ը:

- Շինարարական նախագծերը կատարվել են առանց սահմանված կարգով պահանջվող հորատանցքերի հիման վրա տրված երկրաբանական հետազոտության արդյունքների:

- Ընտրանքային ստուգմամբ արձանագրվել են առանձին դեպքեր, երբ հենարանների հիմքերի միաձույլ բետոնի ամրությունը չի համապատասխանել կապալի պայմանագրով հաստատված չափանիշին՝ 300 ԴաՆ/սմ^2:

- Հենարանների հիմքերում հողի հետլիցքի /տոփանման/ աշխատանքներում, ըստ ակնադիտական ուսումնասիրությունների, առկա են նստվածքներ, որը հետևանք է շինարարական տեխնոլոգիայի խախտման:

«Գյումրի -2» ենթակայանի վերականգնման ծրագիր

Ծրագիրը պայմանավորված է «Գյումրի-2» 220/110/10կՎ ենթակայանի վերականգնման անհրաժեշտության պահանջով:

Ծրագիրը սկսվել է 2009 թվականի հունվար ամսին և ավարտվել 2014 թվականի փետրվար ամսին:

Ծրագրով նախատեսվել և իրականացվել է.
- Խորհրդատվական ծառայությունների մատուցում,
- Ենթակայանի վերականգնման աշխատանքներ:

Ծրագիրը ֆինանսավորվել է Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի զարգացման վարկերի (KFW) բանկի միջև կնքված վարկային համաձայնագրով, որի արժեքը 14.6 մլն եվրո է:

Ծրագրի կատարման պատասխանատուն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն է, որը ծրագրի շրջանակներում 350.3 մլն ՀՀ դրամի չափով իր սեփական միջոցների հաշվին նույնպես իրականացրել է որոշակի աշխատանքներ:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

- «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները, «Գյումրի-2» 220/110/10կՎ ենթակայանի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության նպատակով չի անցկացրել գնումների ընթացակարգերով նախատեսված մրցույթ: Տեխնիկական հսկողությունը փաստացի իրականացվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ–ի աշխատակիցների կողմից.

- Հակահրդեհային ջրավազանի ջրամատակարարման համակարգը և պատի բարձրությունը սալվածքից կառուցվել է նախագծային շեղումներով.

- Հակահրդեհային ջրավազանի հատակի և պատերի վրա հայտնաբերվել են ճաքեր.

- Հակահրդեհային ջրավազանի հատակի վերին շերտը տեղ-տեղ քայքայված էր.

• Ջրավազանի շուրջ իրականացված սալվածքը ամբողջ պարագծով պատերից առանձնացվել էր և ուներ նստվածք.

• Ստուգման ամբողջ ժամանակահատվածում հակահրդեհային ջրավազանում ջուր չի եղել, որը հակահրդեհային նորմի խախտում է:

Քանի որ այդ բոլոր ծրագրերը վերահսկողության ժամկետների ավարտին դեռ ավարտված չէին, նույնիսկ որոշ ծրագրերով դեռ աշխատանքներն անգամ չէին սկսվել, հետևաբար, դրանց Վերահսկիչ պալատը կանդրադառնա հաջորդ տարիներին: Նախապես սահմանված արդյունքային ցուցանիշների կատարումը հնարավոր է գնահատել ծրագրերի ավարտից, այսինքն՝ բոլոր աշխատանքների ավարտական ակտերի ստորագրումից և դրանց շահագործման հանձնելուց հետո:

Էներգետիկ ոլորտում Վերահսկիչ պալատի կողմից հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.5. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության շրջանակն ընդգրկել է ջրային տնտեսության բնագավառի մի շարք ծրագրեր: Մասնավորապես.

1. Դիտարկվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իրագործվող «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երրորդ վարկային ծրագիր»-ը, «Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր՝ երկրորդ փուլ»-ը, «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր»-ը:

Վերահսկողության հիմնական ուղղությունը եղել է նշված ծրագրերի հետևյալ հիմնական արդյունքային ցուցանիշների ապահովման ուսումնասիրությունը.

- շահառուներին մատուցվող ծառայությունների օրական տևողության ավելացում,
- 24-ժամյա ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների տոկոսի ավելացում,
- նախատեսված քանակներով ջրաչափերի տեղադրում,
- մատակարարվող ջրի որակի և բաժանորդների սպասարկման բարելավում,
- չհաշվառված ջրի ցուցանիշի կրճատում,
- վճարների հավաքագրման մակարդակի ավելացում:

Ուսումնասիրված երեք ծրագրերով նախապես սահմանված արդյունքային ցուցանիշների կատարումը հնարավոր է գնահատել ծրագրերի ավարտից, մասնավորապես՝ բոլոր աշխատանքների ավարտական ակտերի ստորագրումից և դրանց շահագործման հանձնելուց հետո, մասնավորապես՝

- ծրագրով նախատեսված շահառուների մոտ անհատական ջրաչափերի, ավտոմատացման համակարգերի, քլորի չափման և այլ սարքավորումների տեղադրման աշխատանքներ,

- Մասիս, Աշտարակ և էջմիածին քաղաքների և դրանց հարակից մի շարք գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքներ,

- ամբարձիչ էքսկավատորների, ուլտրաձայնային հոսքաչափերի, որոնման սարքերի, փականների և խողովակների, պոմպերի և կառավարման վահանակների, անհատական ջրաչափերի ձեռքբերում, տեղադրում և օգտագործում,
- մի քանի տասնյակ քաղաքների և գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքներ:

2. Դիտարկվել են նաև «Ջրային տնտեսության» ՇԻԳ-ի կողմից իրագործվող «Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում» և «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում» ծրագրերը:

Վերահսկողության հիմնական ուղղությունը եղել է նշված ծրագրերի հետևյալ հիմնական արդյունքային ցուցանիշների ապահովման ուսումնասիրությունը.

- էլեկտրաէներգիայի տարեկան խնայողություն,
- ընտրված համակարգերի հեռացնող ջրանցքների արդյունավետության բարձրացում,
- ջրի կորուստների կրճատում,
- ոլորտին առնչվող կարևոր տվյալների և տեղեկատվության առկայության և հուսալիության բարելավում:

Նախապես սահմանված արդյունքային ցուցանիշների կատարումը հնարավոր է գնահատել ծրագրերի ավարտից, այսինքն՝ բոլոր աշխատանքների ավարտական ակտերի ստորագրումից և դրանք շահագործման հանձնելուց հետո: Դրանց Վերահսկիչ պալատը կանդրադառնա հաջորդ տարիներին:

3. Վերահսկողության շրջանակն ընդգրկել է նաև ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների գործունեությունը:

Ընտրանքային կարգով հանդիպակաց ստուգումներ են իրականացվել մի շարք ջուր օգտագործող ընկերություններում (ՋՕԸ): Արձանագրվել են որոշ խախտումներ, մասնավորապես, ջուր օգտագործող ընկերությունները չեն ապահովել ՀՀ կառավարության կողմից սահմանված ոռոգման ջրի ընդունելի կորուստների մակարդակն ու ոռոգման ենթակա հողատարածքների չափերն ու ծավալները:

Հատկանշական է, որ կորուստների մակարդակը մեղմելու նպատակով ոռոգման համակարգերի վիճակի բարելավման համար պետական ֆինանսական աջակցության աճին զուգընթաց, կրկին աճում է փաստացի կորուստների մակարդակը:

Օրինակ, 2013 թվականի համեմատ 2014 թվականին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված և ստացված տեղեկատվության համաձայն՝ ընդունելի կորուստների մակարդակն աճել է՝ հասնելով 42.9%-ից մինչև 45.5%, չնայած այն հանգամանքին, որ միջոցներ են հատկացվել ոռոգման համակարգերի հիմնանորոգման նպատակով:

Ջրային տնտեսության ոլորտում Վերահսկիչ պալատի կողմից հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.6. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարվա ընթացքում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև դատաիրավական ոլորտում: Վերահսկողությունն ընթացել է հետևյալ գերատեսչություններում.

- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ հատուկ քննչական ծառայություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ դատական համակարգ:

ՀՀ գլխավոր դատախազությունում և ՀՀ հատուկ քննչական ծառայությունում իրականացված վերահսկողության շրջանակներում պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման խախտումներ և անարդյունավետ ծախսերի փաստեր չեն արձանագրվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ արդարադատության նախարարությունում իրականացված վերահսկողության արդյունքներին, ապա պետք է նշել, որ դրանցում առկա է պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն, հետևաբար, այն, չի կարող հրապարակվել: Տվյալ ընթացիկ հաշվետվությունը ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարություն՝ պետական գաղտնքի համար սահմանված ընթացակարգով:

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ դատական դեպարտամենտում և ՀՀ դատարաններում (բացառությամբ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի):

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

- Դատական ավտոմատացված համակարգը համապատասխանեցված չէ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև 2013 թվականին ՀՀ դատարանների նախագահների խորհրդի թիվ 129 որոշմամբ պետական տուրքի գանձման կարգի, հայցագնի և դրա որոշման առանձնահատկությունների վերաբերյալ տրվող պաշտոնական պարզաբանումներին: Այդ որոշման թվով 40 պահանջներից Համակարգում իրագործված չեն 24-ը, մասամբ են իրագործված 12-ը, իրագործված են 4-ը:

Սպասարկման ծառայությունների մատուցման ընթացքում կազմված հանձնման-ընդունման արձանագրությունները մանրամասն չեն նկարագրում փաստացի կատարված աշխատանքները, ծրագրային փոփոխությունները:

- Վերահսկվող ժամանակահատվածում Դեպարտամենտի կողմից հանդերձանքի ձեռքբերման համար իրականացվել է ոչ միատեսակ մոտեցում, հաստատվել են իրարամերժ և չհիմնավորված տեխնիկական բնութագրեր, որի արդյունքում կատարվել են «Դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագիրը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի թիվ 43-Ա որոշման պահանջներին անհամապատասխան գնումներ:

Կարգադրիչների հանդերձանքի ձեռքբերման համար 2014թ.-ից մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածի համար պետական բյուջեի միջոցներից տրամադրվել է 69,834.9 հազ. դրամ գումար, որից 17,037.5 հազ. դրամ գումարը արդյունավետ համարվել չի կարող: Համաձայն ՀՀ օրենսդրության և մատակարարման պայմանագրերի համապատասխան դրույթների, անհամապատասխան ապրանքները պետք է վերադարձվեն մատակարարներին:

Վերադարձման ենթակա անհամապատասխան ապրանքների մատակարարումն իրականացրած կազմակերպությունների նկատմամբ, համաձայն մատակարարման պայմանագրերի, պատվիրատուի կողմից պետք է հաշվարկվի տույժ և տուգանք:

Դեպարտամենտի կողմից ներկայացված պարզաբանման մեջ նշվել է, որ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները փոխարինվել են պատշաճ որակի ապրանքներով:

- Թարգմանչական գործերին կցված չեն պայմանագրով պահանջվող թարգմանիչների որակավորումը հավաստող փաստաթղթերը:

- Բավարար չի եղել հսկողական գործառույթներում միավորների ընդգրկվածության աստիճանը՝ ռազմավարական և տարեկան ծրագրերում աուդիտի ենթակա միավորների թվաքանակի նվազում է արձանագրվել:

- Դեպարտամենտի հաշվեկշռում չհաշվառված 4 վարչական շենքերում տեղակայվել են պետական այլ հիմնարկներ, որոնց էլ. էներգիայի և կոմունալ ծախսերն (649.6 հազ. դրամ) կատարվել են Դեպարտամենտի կողմից:

- Մի շարք դեպքերում իրականացված դատաքննություններում չի ապահովվում օրենքի միատեսակ կիրառությունը, խախտվում են ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքով», ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի թիվ 129 որոշմամբ նախատեսված համապատասխան դրույթները, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե պակաս գանձված տուրքի և դրա նկատմամբ հաշվարկված տույժերը պետք է կազմեն 22,294.4 հազ. դրամ և 6,687 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Դատահիրավական ոլորտում Վերահսկիչ պալատի կողմից հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.7. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

1. ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի (այսուհետ՝ ԾԻԳ) կողմից իրականացված ծրագրերի նախորդ տարիներին կատարված վերահսկողության արդյունքները վկայում են, որ այդ ծրագրերը ռիսկային են և պետք է մշտապես լինեն վերահսկողության դաշտում:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատն անդրադարձել է ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի (այսուհետ՝ ԾԻԳ) կողմից իրականացվող որոշ ծրագրերի վերահսկողությանը:

- Ուսումնասիրվել է նաև էլեկտրոնային հասարակության մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) «Մայքրոսոֆթ Ինովացիոն կենտրոն»-ի վերելակի ձեռք բերման, մատակարարման և տեղադրման մրցույթի գործընթացը:

Մրցույթին մասնակցել է 4 ընկերություն: Հաղթող է ճանաչվել «Վերելակ մոնտաժ» ՍՊԸ-ն, որի համասեփականատերը, միաժամանակ, հանդիսանում է մրցույթին մասնակցած

մյուս երկու ընկերությունների համասեփականատեր: Այդուհանդերձ, «Վերելակ մոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 18,720.0 հազ. դրամի չափով պայմանագիր:
Հատկանշական է, որ Վերահսկիչ պալատի աշխատակիցների հարցմանն ի պատասխան, «Վերելակ մոնտաժ» ՍՊԸ-ն ներկայացրել է առևտրային առաջարկ, ըստ որի, նույն վերելակի արժեքը կազմել է 13,440.0 հազ. դրամ: Ստացվում է, որ տվյալ վերելակը վարկային միջոցներով ձեռք է բերվել շուկայական արժեքից 5,280.0 հազ. դրամ թանկ գնով:

- Բացի այդ, ուսումնասիրվել է էլեկտրոնային հասարակության մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի 6 մրցութային փաթեթի (ընդհանուր գումարը՝ 1,189.14 հազ. ԱՄՆ դոլար) նախահաշվային գները: Նախահաշվային գները ձևավորվել են վարկային ծրագրի իրականացման պատասխանատու «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից:

Ուսումնասիրված 6 փաթեթներում նախահաշվային և շուկայական գների տարբերությունները, ինչպես նաև մասնագրերում նույնությամբ կրկնվող ապրանքատեսակների ձևավորված գների միջև առկա շեղումները ներկայացվել են ծրագրերի իրականացման գրասենյակին և պատվիրատուին:

ՇԻԳ-ում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՎՊ համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:

2. «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիլիոտին» ծրագիր

Ծրագիրն իրականացնում է «ՀՀ օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՇԻԳ պետական հիմնարկը:

Վերահսկողությամբ արձանագրված հիմնական փաստերն են.

Խախտվել է ՀՀ կառավարության 10.01.2013թ. գույք ամրացնելու մասին թիվ 16-Ա որոշման պահանջը. «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի» ու Հայաստանի Հանրապետության միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում պետական հատվածի արդիականացման 2-րդ ծրագրով 42,822.5 հազ. դրամ գումարով ձեռք բերված սարքավորումները և գույքը տարիներ շարունակ փաստացի շահագործվել է առանց մուտքագրելու և հաշվառելու:

Հիմնարկում առկա չէր 923.9 հազ.դրամի համակարգչային սարքավորում:

Համակարգչային սարքավորումը 923.9 հազ.դրամ արժեքով վերականգնվեց բնեղեն եղանակով՝ վերահսկողության ընթացքում:

ՀՀ պահուստային ֆոնդից նպատակային հատկացված գումարները Հիմնարկում ձևակերպվել են հաշվապահական հաշվառման և հաշվետվողական կարգի խախտումներով:

Հիմնարկի պահպանման ծախսերը տարիներ շարունակ նախատեսվել են առանց հաշվի առնելու նախորդ տարվա կատարողականը, և այդ պատճառով, փաստացի ծախսերը կազմել են նախատեսվածից զգալի ցածր:

3. «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի Կառավարման գրասենյակ հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) կողմից իրագործվող վարկային ծրագրեր

Գերմանահայկական հիմնադրամը ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստեղծված հիմնարկ է, որը ՀՀ կենտրոնական բանկի անունից իրականացնում և կառավարում է մի շարք վարկային ծրագրեր:

Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող դիտարկման պահին Հիմնարկի կողմից իրականացվող ծրագրերը հետևյալն էին՝

- «Մասնավոր փոքր և միջին ձեռներեցության աջակցում»,
- «Մասնավոր փոքր և միջին ձեռներեցության համար ֆինանսական միջոցների հասանելիություն»,
- «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման վարկային ծրագիր»,
- «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման վարկային ծրագիր»,
- «Վերականգնվող էներգիայի աջակցության վարկային ծրագիր»,
- «Տնտեսության կայունացմանն ուղղված վարկավորման ծրագիր»,
- «Համակարգիչ բոլորի համար վարկային ծրագիր»,
- «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի աջակցում վարկային ծրագիր»,
- «Հայաստանի անշարժ գույքի ոլորտի ֆինանսավորում վարկային ծրագիր»:

Հիմնարկի կողմից բոլոր վարկային ծրագրերն իրականացվում են վերաֆինանսավորման սկզբունքով: Ծրագրերի գործընկեր ֆինանսական կազմակերպությունները (այսուհետ՝ ԳՖԿ) սեփական միջոցներով տրամադրում են տվյալ ծրագրի նպատակներին և պայմաններին համապատասխանող վարկեր, որից հետո դիմում են Հիմնարկին՝ համարժեք ֆինանսավորում ստանալու համար:

Ընդհանուր առմամբ, վերը նշված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է 84.1 մլրդ դրամ, 73.0 մլն դոլար և 127.8 մլն եվրո, իսկ այդ ծրագրերի մնացորդները ԳՖԿ-ներում 2015 թվականի ապրիլի դրությամբ կազմում է 129.7 մլրդ դրամ:

Վերահսկողության ենթակա ծրագրերին առնչվող ամբողջական տեղեկատվությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից չի տրամադրվել՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումների պատճառաբանությամբ:

Արդյունքում, ՀՀ վերահսկիչ պալատին Հիմնարկի կողմից ԳՖԿ-ներին հատկացված միջոցների հետագա նպատակայնության, տրամադրման պայմանների, ժամկետների, դրանց դիմաց վճարման ենթակա տոկոսադրույքների, ԳՖԿ-ների կողմից այդ միջոցների վերադարձելիության, ինչպես նաև նախատեսված և սահմանված պայմանները ԳՖԿ-ների կողմից չպահպանելու հնարավոր դեպքերում Հիմնարկի կողմից ձեռնարկված քայլերի (տույժեր և տուգանքներ և այլն) մասին տեղեկատվությունը հասանելի չի եղել:

Իրականացված ծրագրերի ընթացքը, նպատակայնությունը և արդյունավետությունը, ինչպես նաև ծրագրերի շրջանակներում կիրառված ընթացակարգերի և գործարքների օրինականությունն ու համապատասխանությունը, տոկոսագումարների վճարումը, վարկերի վերադարձվելիությունն ու ծրագրերի կատարման ընթացքում և արդյունքում կազմված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելու նպատակով ստուգումը հնարավոր է ավարտին հասցնել միայն համապատասխան տեղեկատվություն ստանալու դեպքում:

Նշված խնդրի կապակցությամբ Վերահսկիչ պալատը ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանն առաջարկել է քննարկել «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ

հոդվածի 2-րդ մասի բ/, գ/ և ե/ կետերով, ինչպես նաև 22-րդ հոդվածի 1-ին մասի գ/, 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական պարտքի կառավարման, այդ թվում՝ արտաքին վարկային միջոցների ներգրավման սպասարկման և օգտագործման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի և ՀՀ պետական պարտքի սպասարկման մասով ՀՀ կենտրոնական բանկի գործունեության և պայմանագրային հիմունքներով պետական բյուջեն և պետական պարտքը սպասարկող առևտրային բանկերի սպասարկման գործունեության նկատմամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողական իրավասություններին առնչվող վերոգրյալ պատճառաբանությունը:

Նկատի ունենալով հաշվետու տարում և նախորդ տարիներին վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները, ինչպես նաև ներկա փուլում դրանց կարևորությունը հանրային ֆինանսների կառավարման գործում, Վերահսկիչ պալատի 2016 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսվել է վերահսկողական գործունեության ընթացքում առավել համակողմանի և խորությամբ ուսումնասիրել վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործումը:

Վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Վերահսկիչ պալատի կողմից հաշվետու տարում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում, որոնց կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Միջազգային կառույցների հետ համագործակցության հիմնական ուղղությունը եղել է Վերահսկիչ պալատի կարողությունների զարգացումը:

Ֆինանսական, համապատասխանության և կատարողականի վերահսկողության գործընթացների բարելավման նպատակով՝
Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվել են INTOSAI ստանդարտներին համապատասխան ֆինանսական և համապատասխանության աուդիտի ձեռնարկներ, որոնց հիման վրա իրականացվել է երեք պիլոտային աուդիտ: ՎՊ աշխատակիցների համար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

INTOSAI ստանդարտներին համապատասխան մշակվել է ֆինանսական և համապատասխանության վերահսկողության համակարգերի ներդրման ռազմավարություն:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության աջակցությամբ սկսվել է կատարողականի վերահսկողության ստանդարտների համապատասխանեցման գործընթացը INTOSAI ստանդարտներին: ՎՊ աշխատակիցների համար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Նախատեսվում է իրականացնել կատարողականի պիլոտային աուդիտներ:

ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի աջակցությամբ ՀՀ պետական բյուջեի կատարման ՀՀ կառավարության տարեկան հաշվետվության վերաբերյալ Վերահսկիչ պալատի եզրակացության տրամադրման գործընթացի բարեփոխման շրջանակում մշակվել է բյուջեի կատարողականի աուդիտի մասով հատուկ հաշվետվություն, որտեղ որպես հիմնական թիրախ պետական բյուջեի բավարար ծածկույթով աուդիտի իրականացման

մեթոդաբանությունն է: Խնդիրն առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ կազմակերպվել են աշխատանքային այցեր Ռուսաստանի Դաշնության և Լիտվայի Հանրապետության բարձրագույն վերահսկիչ մարմիններ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ ակտիվ փոխհամագործակցության շնորհիվ Վերահսկիչ պալատում սկսվել են ինքնագնահատման միջոցով կատարողականի չափման ստանդարտի ներդրման աշխատանքները: Ստեղծվել է աշխատանքային խումբ, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, աշխատանքները շարունակվում են: Առաջիկայում Վերահսկիչ պալատը կենթարկվի INTOSAI կողմից ընդունված մեթոդաբանության միջոցով արտաքին գնահատման (ինքնագնահատման):

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Ներքին և արտաքին աուդիտի ինստիտուտների և մասնագետների միջև հնարավոր համագործակցություն» թեմայով «կլոր սեղան»:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության, Վերահսկիչ պալատի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության միջև ստորագրվել է «Հայաստանի արտաքին վերահսկողության համակարգի անկախության, արդյունավետության և թափանցիկության բարձրացման» նպատակով Համագործակցության գործողությունների իրականացման մասին Փոխըմբռնման հուշագիր:

Օտարերկրյա բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ համագործակցության շրջանակներում՝

Վերահսկիչ պալատի աշխատակիցները Սոֆիայում մասնակցել են INTOSAI Ազգային առանցքային ցուցանիշների համաժողովի աշխատանքներին, որտեղ որոշում է ընդունվել 2016թ. հերթական համաժողովն անցկացնել Երևանում:

Երևանում անցկացվել է Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի XV հոբելյանական համագումարը: Համագումարում Վերահսկիչ պալատը ստանձնել է ԱՊՀ երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի նախագահությունը: